ՀՀ Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքում համայնքի ղեկավարի 2011 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում համայնքում կատարած աշխատանքների վերաբերյալ համայնքի բնակչությանը ներկայացված հաշվետվության և համայնքում ծառացած խնդիրների քննարկման վերաբերյալ տեղեկություն

Քննարկումը տեղի է ունեցել գյուղապետարանի դահլիճում, որ սկսվել է 2011 թվականի հուլիսի 12-ին ժամը 15^{00}-ին:
Քննարկմանը մասնակցել են Արմավիրի մարզպետարանի աշխատակազմից Լարիսա Մուրադյանը, համայնքի միջնակարգ դպրոցի տնօրենը, բուժ ամբուլատորիայի տնօրենը և աշխատակիցները, ավագանու անդամները, մանկապարտեզի աշխատակիցները, համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատողները և համայնքի բնակիչներ:

2011 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում համայնքում կատարվել են ներքոնշյալ աշխատանքները՝
Անցկացվել է Համայնքի ավագանու 8 նիստ, որոնց ժամանակ քննարկվել են համայնքում կարևոր լուծում պահանջող հարցեր,իսկ ավագանու որոշումները փակցված են համայնքում՝ գյուղապետարանի շենքում՝ բնակիչների համար տեսանելի տեղում:

Կազմակերպվել և իրականացվել է ներհամայնքային առուների մաքրման աշխատանքներ, այդ թվում նաև՝ կիսախողովակների:
Կատարվել է դաշտամիջյան ճանապարհների հողալցման և հարթեցման աշխատանքներ՝ նախապատրաստվելով բերքահավաքին:
Համայնքում ազգաբնակչության աճը խթանելու նպատակով խրախուսվում են համայնքի երիտասարդ ընտանիքները: Երիտասարդ 19 ընտանիք երեխա ունենալու կապակցությամբ ստացել է 50.000- ական դրամ:
Տեառընդառաջի կապակցությամբ համայնքի 20 նորապսակ ընտանիքների շնորհավորելու համար յուրաքանչյուր ընտանիքի հատկացվել է 15000 – ական դրամ:
Համայնքում նորմալ սանիտարական վիճակի ապահովման համար շաբաթական երկու անգամ աղբահավաք տրանսպորտային միջոցով կատարվում է աղբահավաքման աշխատանքներ:
Ժամանակին վճարվել է Գյուղապետարանի և Մանկապարտեզի աշխատողների աշխատավարձը և սոց. վճարները:
Համայնքի բնակիչ 3 զորակոչիկների էջմիածնի ավտոդպրոցում սովորելու համար՝ անվճար երթևեկություն ապահովելու նպատակով, յուրաքանչյուրին հատկացվել է 20.000-ական դրամ:
Կազմակերպվել է միջոցառումներ՝ նվիրված կանանց տոնին ու մայրության օրվան որոնց մասնակցել է համայնքի շուրջ 300 բնակիչներ, նրանք

գյուղապետարանի միջոցներով տեղափոխվել են Արամ Խաչատրյանի անվան համերգասրահ ու ապահովվել է նրանց մասնակցությունը երկու համերգների :
Համայնքի տարածքում կազմակերպվել է շաբաթօրյակ և մաքրվել են կենտրոնական փողոցը և գյուղամիջյան հատվածը:

Համայնքի վարչական բյուջեի միջոցներից հատկացվել է սոցիալական օգնություն՝ համայնքի անապահով բնակիչներին, Հայրենական մեծ պատերազմի վետերաններին, Արցախյան ազատամարտի մասնակիցներին, Արցախյան ազատամարտում զոհվածների ընտանիքներին:
Կազմակերպվել է մեծ միջոցառումներ՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմի և Արցախի ազատագրման տարելիցներին, Հանրապետության օրվան՝ մայիսի 28-ին:
Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառումներին մասնակցելու համար գյուղի մանկապարտեզին գյուղապետարանի կողմից տրամադրվել է ավտոբուս՝ նրանց անվտանգ դեպի Երևան հասցնելու և հետ վերադարձնելու համար:
Ապրիլի մեկից իր աշխատանքներն է վերսկսել համայնքի <<Գառնիկ Կարապետյանի անվան մանկապարտեզը>> ՀՈԱԿ-ը, որտեղ հաճախում են համայնքի շուրջ 56 երեխաներ, որոնց սննդի հարցը լուծվում է գյուղապետարանի և ծնողմիջոցների հաշվին:
Համայնքի տարածքում պատշաճ մակարդակով կազմակերպվել է գարնանային զորակոչը:
Ձեռք են առվել միջոցներ սպասվող բերքահավաքը պատշաճ ձևով՝ առանց խոչընդոտների կազմակերպելու և իրականացնելու համար:
Այս ժամանակահատվածում կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություններ, պատասխանվել է նրանց բոլոր հարցերին, դիմումներին և տրամադրվել է պահանջվող փաստաթղթերը:
Ընթացքի մեջ է համայնքի մանկապարտեզի խաղահրապարակի կառուցման և Արմավիրի մարզպետարանի կողմից համայնքի մանկապարտեզին տրված ատրակցիոնների տեղադրման աշխատանքները:
Վեց ամսվա կտրվածքով բյուջեի եկամուտները հավաքագրվել և ծախսերը կատարվել են հետևյալ համամասնություններով՝ **հարկային եկամուտները՝** հողի հարկ պլան 6750,4 հ/դ , փաստացի 4074,2 հ/դ, կատարողական 60,35%, գույքահարկ պլան 1188,3 հ/դ, փաստացի 1177,7 հ/դ, կատարողական 99,11 %, տեղական տուրքեր պլան 163,9 հ/դ, փաստացի 135,7 հ/դ, կատարողական 82,79%, այլ ոչ հարկային եկամուտներ պլան 122,4 հ/դ, փաստացի 114,0 հ/դ, կատարողակ 93,14%, դոտացիա պլան 14453,8 հ/դ, փաստացի 14453,8 հ/դ, կատարողական 100%, ընդամենը եկամուտներ՝ պլան 23176,8 հ/դ, փաստացի 20453,3 հ/դ, կատարողական 88,25%: **Ծախսեր՝** Տեղական ինքնակառավարում պլան 11900,0հ/դ, փաստացի 9650,6 հ/դ, կատարողական 81,10 %, սոց. օգնություն պլան 3000,0 հ/դ, փաստացի 3000,0 հ/դ, կատարողական 100%, մշակույթ, սպորտ և կրոն պլան 1500,0հ/դ, փաստացի 1310,0հ/դ,

կատարողական 87,33%, սան մաքրում պլան 917,4հ/դ, փաստացի 917,4հ/դ, կատարողական 100 %, կրթություն և գիտություն պլան 2650,0հ/դ, փաստացի 2100,0 հ/դ, կատարողական 79,25 %, ընդամենը ծախսեր պլան 19967,4 հ/դ, փաստացի 16978,0հ/դ, կատարողական 85,03%:

Տեղի ունեցավ քննարկում, որի ժամանակ բարձրացվեցին հետևյալ հիմնախնդիրները՝

<u>Համայնքում առկա խնդիրներն են</u>

Հիմնովին վերանորոգման կարիք ունի Մշակույթի տունը:
Անմխիթար վիճակում է գտնվում խմելու ջրի ցանցը՝ ջրատար խողովակները ամբողջությամբ վնասված են:
Անհրաժեշտ է ավարտին հասցնել գյուղի մնացած փողոցների խճապատումը:
Պետք է շարունակվի ու ավարտին հասցվի դպրոցի ներքին հարդարման աշխատանքները:
Հիմնովին վերանորոգման կարիք ունի գյուղի Ծանրամարտի մարզադպրոցը:
Ոռոգման ջրի սակագները շատ բարձր են անգամ այն դեպքում, երբ Կառավարությունը հայտարարել է ,որ ս/թ մայիս ամսվա մինչև 20-ը ոռոգման ջուրը գյուղացիներին տրվում է անվճար, սակայն մեր համայնքում ոռոգման ջրի վարձերը գանձվում են նույն սակագներով և նույն չափերով, ինչ որ մյուս տարիներին և հաշվի չեն առնվում վերոնշյալ արտոնությունները:
Կարևոր նշանակություն ունի համայնքի Բուժ ամբուլատորիայի համար շտապ օգնության մեքենայի առկայությունը, քանի որ այն սպասարկում է 4 համայնք:
Հազարամյակի մարտահրավերներ Հայաստան ծրագրի շրջանակներում համայնքում տեղադրված կիսախողովակները չեն ծառայում իրենց նպատակին, ինչպես կիսախողովակների այնպես էլ երկաթյա խողովականցումների չափերը անհրաժեշտից ավելի փոքր են և ոռոգման ջրի անհրաժեշտ քանակության անցումը չի ապահովվում:

Գեղակերտ համայնքի ղեկավար Ա. Առաքելյան

12.07. 2011թ

ՔԱՂՎԱԾՔ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011Թ-Ի 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

12.07.2011թ գ. Գեղակերտ

Հաշվետվությունը ներկայացվեց գյուղապետարանի դահլիճում, որը տեղի ունեցավ ս/թ հուլիսի 12-ին ժամը 15:00-ին:

Մասնակցում էին Արմավիրի մարզպետարանից փոխմարզպետ Լարիսա Մուրադյանը, ավագանու անդամներ, համայնքի միջնակարգ դպրոցի տնօրենը, բուժ ամբուլատորիայի աշխատակիցները, մանկապարտեզի աշխատակիցներ, համայնքի բնակիչներ՝ շուրջ 25 մարդ:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց թե ինչ աշխատանքներ են կատարվել համայնքում 2011թ-ի առաջին կիսամյակում և առաջարկեց ներկաներին քննարկել ու տալ հարցեր:

Համայնքի բնակիչները բարձր գնահատեցին համայնքի ղեկավարի կատարած աշխատանքների արդյունքը :

Ավագանու անդամ Կամո Ստեփանյանը ասաց, որ չնայած համայնքում կան շատ խնդիրներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեն, սակայն գյուղապետարանը իր միջոցներով հնարավորություն չունի լուծելու դրանք և դրա համար համայնքը ունի պետական աջակցության կարիք:

Վեր հանվեցին համայնքի մշակույթի տան և մարզադպրոցի վերանորոգման, խմելու ջրի խողովակաշարի վերանորոգման, դպրոցի ներքին հարդարման աշխատանքների կատարման հարցերը, ինչպես նաև գյուղացիներին ամենից շատ հուզող՝ ոռոգման ջրի սակագների վերաբերյալ հարցերը:

Քննարկումը ավարտվեց ջերմ մթնոլորտում:

Արձանագրող՝նիստի քարտուղար Ն. Հարությունյան

ՔԱՂՎԱԾՔ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011Թ-Ի 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

12.07.2011թ գ. Գեղակերտ

Հաշվետվությունը ներկայացվեց գյուղապետարանի դահլիճում, որը տեղի ունեցավ ս/թ հուլիսի 12-ին ժամը 15:00-ին:

Մասնակցում էին Արմավիրի մարզպետարանից փոխմարզպետ Լարիսա Մուրադյանը, ավագանու անդամներ, համայնքի միջնակարգ դպրոցի տնօրենը, բուժ ամբուլատորիայի աշխատակիցները, մանկապարտեզի աշխատակիցներ, համայնքի բնակիչներ՝ շուրջ 25 մարդ:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց թե ինչ աշխատանքներ են կատարվել համայնքում 2011թ-ի առաջին կիսամյակում և առաջարկեց ներկաներին քննարկել ու տալ հարցեր:

Համայնքի բնակիչները բարձր գնահատեցին համայնքի ղեկավարի կատարած աշխատանքների արդյունքը :

Ավագանու անդամ Կամո Ստեփանյանը ասաց, որ չնայած համայնքում կան շատ խնդիրներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեն, սակայն գյուղապետարանը իր միջոցներով հնարավորություն չունի լուծելու դրանք և դրա համար համայնքը ունի պետական աջակցության կարիք:

Վեր հանվեցին համայնքի մշակույթի տան և մարզադպրոցի վերանորոգման, խմելու ջրի խողովակաշարի վերանորոգման, դպրոցի ներքին հարդարման աշխատանքների կատարման հարցերը, ինչպես նաև գյուղացիներին ամենից շատ հուզող՝ ոռոգման ջրի սակագների վերաբերյալ հարցերը:

Քննարկումը ավարտվեց ջերմ մթնոլորտում:

Արձանագրող՝նիստի քարտուղար Ն. Հարությունյան